ԺԴ.

Մաճիխել վտակի Աւազանը եւ նորա շրջակայ Վտակ-Առուակները:

Դեվիս վտակի եւ Իշկալա վտակի խառնունքից հինգ կիլոմետր ցած Ճորոխին աջից խառնւում է Կասկուրի *վտակը, որ իջնում է Սինդիէտ լեռներից. ապա աւելի ցած՝* Կինձկուրէրի, Կենցխուրետիս-ցիխէ, Ջինգուրի, Կարտաուրի *եւ* Սաբաուր *առուակները, որոնք Խեդիսմթա լ-ից են իջնում. իսկ ներքին Մարադիսի դէմ առ դէմ խառնւում է* Մաճիխել *վտակը,* 25 *կիլոմետր երկայնութիւն եւ բազմաթիւ վտակներ ունի, սկիզբն է առնում Կարճխալ եւ Սինդիէտ լ-ից: Մաճիխելի գլխաւոր առուակը իջնում է Սինդիէտ լ-ից նախ դէպի հիւսիս ուղղուած մինչեւ* Էֆրատա *դեղը, որի մօտ ընդունում է* Զուչատի *առուակը, որոնք առաջում են Աղեգուլի եւ Բաղինա եայլաները: Ապա ուղղուելով արեւմտա-հիւսիս մտնում է* Զեդվակէ *դեղը, ընդունելով աջից* Կվաբիստավի, *ձախից՝* Կվակիբէի *լեռներից համանուն դեղերը առաջող առուակները: Նոյն ուղղութեամբ առաջ գնալով հասնում է* Կվեդախերտվիս, *որ տեղ աջից ընդունում է* Ցիպնար *եւ* Մեդիետի *եայլաներից* Մինդիետի *եւ* Աէրիասի. *ձախից՝* Կավտարետի *եւ* Գորգացէի *առուակները, որոնք առաջում են համանուն դեղերը, հաս-*